

## ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

«Հետազոտենք և բացահայտենք աշխարհը» խորագրով աշակերտական աշխատաժողովի մասնակից աշակերտները նստաշրջանին պետք է ներկայացնեն իրենց կատարած հետազոտական աշխատանքները, դրանց արդյունքները: Ձեկուցումների առավելագույն տևողությունը 10 րոպե է:

## ԹԵՄԱՏԻԿ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Հետազոտենք և բացահայտենք աշխարհը» խորագրով աշակերտական գիտաժողովին ներկայացվող զեկուցումները կարող են ներկայացվել հետևյալ բնագավառներից.

- 1) Հայոց լեզու և գրականություն,
- 2) Հայրենագիտություն,
- 3) Օտար լեզուներ,
- 4) ԲՏ&Մ,
- 5) Արվեստ և արհեստ,
- 6) Հասարակություն, հասարակական գիտություններ,
- 7) Ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Գիտաժողովին մասնակից բոլոր աշակերտներին տրվելու են մասնակցության հավաստագրեր: Նստաշրջանին ներկայացված լավագույն նյութերը տպագրվելու են, իսկ աշակերտները հնարավորություն են ունենալու շրջայց կատարելու ԵՊՀ-ում:

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

Ծավալը՝ 3-5 էջ:

Էջի ֆորմատը՝ A4 (8.27X11.69 մմ), լուսանցքները:

Տեքստի տառատեսակը՝ հայերեն՝ Sylfaen, ռուսերեն և անգլերեն՝ Times New Roman:

Առաջին էջի վերին տողում (մեջտեղում) 11 pt տառաչափով, գլխատառերով, թավ (Bold) գրվում է հոդվածի վերնագիրը: Մեկ տող ներքևում՝ տողի աջ կողմում, 10 pt տառաչափով տրվում են հեղինակ(ներ)ի անուն-ազգանուն(ներ)ը: Մեկ տող ներքևում՝ տողի աջ կողմում, 9 pt տառաչափով, շեղատառ (Italic) գրվում է դպրոցի անունը: Մեկ տող ներքևում՝ տողի աջ կողմում, 9 pt տառաչափով գրվում է հեղինակի էլեկտրոնային փոստի հասցեն: Մեկ տող ներքևում՝ տողի աջ կողմում, 9 pt տառաչափով, շեղատառ (Italic) տրվում է գիտական ղեկավարի գիտական աստիճանը, կոչումը, անուն-ազգանունը: Մեկ տող բաց թողնելով՝ անհրաժեշտ է ներկայացնել աշխատանքի հիմնական

տեքստը: Հիմնական տեքստի տառաչափը՝ 10 pt, տողերի հեռավորությունը՝ 1: Տեքստը պետք է հավասարեցված լինի երկու կողմերից (Alignment: Justify): Պարբերությունները անհրաժեշտ է սկսել 1 սմ խորքից՝ TAB-ի կիրառմամբ:

Հղումները պարտադիր են. տրվում են տողատակում՝ 8 pt տառաչափով, տողերի հեռավորությունը՝ 1: Հղման տեքստը պետք է հավասարեցված լինի երկու կողմից (Alignment: Justify): Հղման մեջ պետք է ներկայացված լինեն օգտագործված աշխատանքի հեղինակի ազգանունը և անվան առաջին տառը (թավ տառերով՝ Bold), այնուհետև՝ աշխատանքի վերնագիրը, հրատարակման վայրը, թվականը, օգտագործած գրականության էջը:

Հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփագրերը պարտադիր են: Հոդվածի հիմնական տեքստից մեկ տող հետո՝ տողի մեջտեղում, 10 pt տառաչափով, գլխատառերով, թավ (Bold) գրվում է հոդվածի վերնագիրը: Մեկ տող հետո 10 pt տառաչափով տրվում է հեղինակ(ներ)ի անուն-ազգանուն(ներ)ը: Մեկ տող ներքևում գրվում է «բանալի բառեր», և նշվում է 4-6 բանալի բառ: Մեկ տող ներքևում 60-80 բառի սահմաններում համառոտ ներկայացվում է զեկուցման ամփոփագիրը (հիմնական էությունը, նպատակը, խնդիրները, արդյունքները):